«Ազատամարտիկ»-ի

ճանապարհը...

Մենք պետք է համառորեն կռվենք հանուն երեխաների ու հանուն հայրենի հողի, կրծքով հարվածներն ընդունենք մարտում՝ խնայելով հոգին:

Տիրտեոս

«Ազատամարտիկ» ՈԲՀԿ-ի հիմնադրման հիմքը հանդիսացավ վերջին երկու տարիների ընթացքում կառավարության կողմից բնակարաններով ապահովելու ծրագրի դադարեցումը, բնականաբար՝ զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների հարցերով: Հարցը մնում էր անպատասխան , թե ինչո՞վ էր պայմանավորված այդ դադարը:

...ԵՎ 2004թ-ին կրկին անգամ համախմբված ազատամարտիկների խումբը որոշեց ստեղծել «Ազատամարտիկ» կազմակերպությունն ու գոնե մասամբ աջակցել զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին: Այն ընտանիքներին, որոնց առաջին հերթին պետք է ուշադրություն ցուցաբերվեր, սակայն լիարժեք անուշադրության էին մատնվել՝ միանգամայն բոլորի կողմից, որն էլ նոր սերնդի բացահայտ բացասական լիցքավորման աղբյուրը կարող էր հանդիսանալ:

- Ուզում եք մե՛նք էլ ձեր նման արհամարհվենք:

Նման պատասխանը բացառելու համար «Ազատամարտիկ»-ն իր առջև խնդիր է դրել հանրապետության բոլոր կրթօջախներում անցկացնել ռազմահայրենասիրական դասեր, ձևավորել ռազմահայրենասիրական խորհուրդներ, որ սերնդե-սերունդ գիտակցեն՝ հայրենիքը թանկ է ամեն ինչից:

Կազմակերպության գործունեության մասին մերթ-ընդ մերթ իր հստակ խոսքն է ասում նախագահ՝ Հայկ Հարությունյանը, ապա լռում մի այնպիսի լռությամբ, որի ասելիքն ավելի հստակ է. դա է՝ ընկերներին և նրանց ընտանիքներին օգնելու, ինչպես նաև հայրենիքին նվիրյալ սերնդի դաստիարակման պարտավորվածությունը:

Թերևս 2004-2005թթ. Ամանորը առաջինն էր «Ազատամարտիկ»-ի կյանքում, որը նա նշեց թոռ ու բոհի միջով անցած իր ընկերների և նրանց ընտանիքների հետ: Կգա ժամանակը, որ Ամանորի նվիրումը կդառնա նրա ամենօրյա նվիրումը, ինչպես մարտի 8-ը՝ Սպայի տան պատերի ներքո - անմնացորդ հայրենիքին նվիրված Արիաց Տիկնանց մեծարման ցերեկույթը:

«Ազատամարտիկ»-ը «Բանակ» ՀԿ համակարգող խորհրդի հետ համատեղ մեկնեց Արցախ, ծանոթացավ զինվորների առօրյային, ժպտաց ու ծիծաղեց նրանց հետ և հավատով հետ վերադարձավ, նա վստա'հ էր, որ ներկայիս «Զինվոր» ՀԿ համակարգող խորհրդի նախագահ՝ Մարգարիտա Խաչատրյանի նվիրումն իր հստակ քայլին հավատարիմ լինելն է, հանուն մեր զինվորների երջանիկ և առողջ ծառայության: Զինվորի «ճակատագիրը» մոր ապահով ձեռքերում է...

Սեպտեմբերի 22-ն էլ «Ազատամարտիկ»-ը հպարտ դիմավորեց, քանզի «Ազատամարտիկ»-ի օրը՝ հաղթանակի տարածությանն է վայել:

- Դեռ ի՞նչ ենք արել որ... բայց անելո՛ւ ենք, ամեն գնով նվիրվելո՛ւ ենք մեր ընկերներին ու ծառայելու՛ ենք մեր հայրենիքին, մենք պա՛րտք ենք նրանց...

Եթե արվեստը նույնիսկ հայրենիք չունի, արվեստագետներն ունեն այն:

Սեն Սանս

«Ազատամարտիկ»-ի իրագործած ծրագրերից են նաև -

/300 շահառու ընտանիքների համար/

1. **հագուստի բաժանման բարեգործական ակցիա**
   /հուլիս/
2. **սննդի բաժանման բարեգործական ակցիա**
   /սեպտեմբեր/
3. **հագուստի բաժանման բարեգործական ակցիա**
   /հոկտեմբեր/
4. **Քարվաճառ գյուղի դպրոցին՝ հագուստի և սննդի պարկերի տրամադրում**
   /պատասխանատու՝ տեղի Վ. Սարոյանի անվան միջ. դպրոցի տնօրեն/

«Ազատամարտիկ»-ը դիմավորեց նաև 2005-2006թթ. Ամանորը և ձեռք մեկնեց իր շահառու ընկերներին...

Սուսաննա Նազարեթյան /«Ազատամարտիկ»-ի գրասենյակի պատասխանատու/

- Ի՞նչն ստիպեց Ձեզ աջակցել «Ազատամարտիկ»-ին և կապվել նրան:
- Տեսնելով ամուսնուս՝ Հայկ Հարությունյանի աշխատանքը, մտածեցի, իսկ ինչու՞ չօգնել նրան և նրա նման մարդկանց: Ես ինձ հանգիստ եմ զգում , քանզի Հայկի նման հայ ունենք, որ այսօր ջանք ու եռանդ չի խնայում թեթևացնելու իր ընկերների և նրանց ընտանիքների հոգսը: Ես իմ ամուսնու հավատարիմ «զինակիցն» եմ: Ե՛ս, որպես հայ կին, գիտակցելով. 1988թ-ից իմ 4 երեխաներին մենակ եմ պահել, մինչև նրանց հոր հաղթանակով վերադարձը՝ 1994թ-ին: Հայրենասեր կինը պետք է իր ամուսնու կողքին լինի, դա բնական և նորմալ երևույթ է: Տա՛ Աստված, որ այլևս պատերազմ չլինի, հաշտությունն ու խաղաղությունը թագավորեն, բայց... եթե անհրաժեշտություն լինի, ես էլի՛ իմ ամուսնու կողքին եմ:
- Արդյոք շա՞տ չեն ազատամարտիկների հարցերով զբաղվող կազմակերպությունները:
- Իհարկե ո՛չ: Գովելի է, որ ազատամարտիկների հարցերով զբաղվող շատ կազմակերպություններ կան և դեռ մեկն էլ ավելացավ: Մենք նրանց չենք խանգարում, ընդհակառակը՝ օգնում ենք: Մենք տարբերություն չենք դնում կամավորականների, զինվորական և եռամսյա հավաքով գնացած տղաների մեջ և շարժվում ենք մեկ հստակ առաքելությամբ.

Ճանաչել տալ ազատամարտիկ հասկացությունը եւ նպաստել ազատամարտիկների ճանաչմանն ու գնահատմանը՝ հանուն վաղվա հաղթանակների:

Սերը հայրենիքի հանդեպ կհաղթահարի ամեն ինչ:

Վերգիլիոս